

# Մուլում է քամին

## հեղինակ՝ Քեթրին Մենսֆիլդ

### թարգմանիչ՝ Ռոբերտ Տերխաչատրյան

Նա արթնանում է հանկարծակի ու սարսափահար: Ի՛նչ է պատահել: Ինչոր բան է պատահել: Ոչինչ էլ չի պատահել: Պարզապես քամին է ցնցում տունը, շրխկացնում պատուհանները, ճոճում տանիքում եղած մետաղի մի կտոր ու շարժում մահճակալը: Պատուհանից այն կողմ օրորվում են տերևները, վեր են բարձրանում ու հեռանում. ծառուղում, սոճուց կախված մի ամբողջ լրագիր, տատանվում է օդում փչացած օդապարիկի նման ու ընկնում ցած: Ցուրտ է: Ամառն արդեն վերջացել է. աշուն է, ամեն ինչ սգեղ տեսք է ընդունել: Կառքերը ճոռալով անցնում են փողոցով՝ ճոճվելով այս ու այն կողմ: Երկու չինացի ծուլորեն անցնում են՝ իրենց ուսերին կրելով լծակներ, որոնցից կախված են բանջարեղենով լի զամբյուղներ: Չինացիների խոզանականման մազերն ու կապույտ վերնաշապիկները ծածանվում են քամուց: Երեք ոտնանի մի շուն կաղկանձում է դարպասից այն կողմ: Ամեն ինչ վերջացած է: Ի՛նչ: Օ՛, ամեն ինչ: Եվ աղջիկը դողացող մատներով սկսում է հարդարել մազերը՝ չհամարձակվելով նայել հայելու մեջ: Մայրը ճաշասենյակում գրույցի է բռնվել տատիկի հետ:

Կատարյալ ապուշ: Պատկերացրեք, այդպիսի եղանակին դրսում՝ պարանի վրա բան թողնել. . . Հիմա իմ տեներֆիրյան թեյասփռոցը պարզապես ծվենների է վերածել քամին: Այդ ի՛նչ տարօրինակ հոտ է: Դա կրակի վրա այրվող ապուրի հոտ է: Օ՛, երկինք, այսբան էլ անտանելի քամի:

Նա երաժշտության դաս ունի ժամը տասին: Բեթհովենի ամենաչնչին ուրիշն անգամ սկսում է հնչել նրա ուղեղում, երկար ու անտանելի ելևէջները գլորող թմբուկների նման. . .

Մերի Սվանսոնը ետևի դռնով վազում է դուրս՝ քաղելու քրիզանթեմները, նախքան քամին կփչացնի դրանք: Քամին նրա վերնաշապիկը բարձրացնում է վեր՝ մինչև գոտկատեղը. նա փորձում է իջեցնել փեշերը, հավաքել ծնկների արանքում, քանի դեռ կռացած է, բայց ապարդյուն, քամին նորից է բարձրացնում: Բոլոր ծառերն ու թփերը ալեկոծվում են նրա շուրջը: Նա, որքան հնարավոր է արագ քաղում է քրիզանթեմները, թեև բոլորովին շփոթված է: Չի էլ մտածում, թե ինչ է անում. արմատախիլ է անում բույսերը, թեքում է ու ճոճում, անիծում ու ոտնատակ տալիս:

— Ի՛ սեր աստծո, առջևի դուռը փակ պահեք: Պարտեզ գնացեք ետևի դռնից, — գոռում է ինչոր մեկը: Հետո լսվում է Բոգիի ձայնը. «Մայրի՛ կ, քեզ հեռախոսի մոտ են կանչում: Մայրի՛ կ, հեռախոսի մոտ: Սսագործն է:

Ի՛նչ անտանելի կյանք է. զզվելի, ուղղակի զզվելի. . . ու հիմա էլ նրա գլխարկի ռետինը կտրվեց: Իհարկե, այդպես էլ պետք է լիներ: Նա իր հին բերետը կոնի ու ետնամուտքով աննկատ դուրս կսահի տնից: Բայց մայրը նկատել էր նրան:

— Մաթիլդա՛, Մաթիլդա՛: Վերադարձիր անմիջապես: Ի՞նչ է մտել գլուխդ: Այդ ի՞նչ ես դրել գլխիդ: Դա նման է թեյամանի ծածկոցի: Իսկ ինչի՞ դ է պետք ճակատիդ այդ բաշը:

— Ես չեմ կարող վերադառնալ, մայրիկ: Ես կուշանամ դասից:

— Վերադարձի՛ր, անմիջապես՝ ս:

Չի վերադառնա, ետ չի գնա: Ատում է մորը: «Գրողի ծոցը գնա», — գոռում է աղջիկը, վազելով փողոցն ի վար:

Սրբիկանման փոշին գալիս է ալիքներով, ամպանման, մեծ շրջապտույտներով, իր հետ բերելով ծղոտի, աղբի ու թափոնների կտորներ: Պարտեզից լսվում է քամուց մոնչացող ու ալեկոծվող ծառերի ձայնը: Կանգնելով փողոցի խորքում, միստր Բուլենի տան դարպասի մոտ, նա լսում է ծովի հառաչը. «Խշ՛շ. . խշ՛շ. . խշ՛շ. . .»: Սակայն միստր Բուլենի հյուրասենյակը քարանձավի նման խաղաղ է: Պատուհանները փակ են, փակոցափեղկերը՝ կիսով չափ քաշված: Մաթիլդան չի ուշացել դասից: Նրանից առաջ եկած աղջիկը հենց նոր սկսել է նվագել Մակ Դոուելի «Դեպի այսբերգ» երգը: Միստր Բուլենը թեթևակի նայեց ու ժպտաց:

— Նստեցեք, — ասում է նա: — Նստեցեք այնտեղ, անկյունի բազկաթոռին, փոքրիկ տիկին:

Ինչ ծիծաղելի տեսք ունի նա: Կարծես թե ձեզ վրա չի ծիծաղում. . . բայց ինչոր դրա նման բան է զգացվում. . . Օ՛, ինչ խաղաղ է այստեղ: Մաթիլդային դուր է գալիս այդ սենյակը: Այստեղից արվեստի հոտ է փչում, սարժի, տամկացած ծխի և հովտաշուշանների. . . Ռուբինշտեյնի գունաթափ ֆոտոնկարի ետևում, կրակարանի վրա կա ծաղիկներով լի մի ծաղկաման. . . a mon ami Ռոբերտ Բուլեն. . . Սև, փայլուն դաշնամուրի վրա կախված է «Լքվածը»՝ սպիտակ հագուստով, անհայտ մի կնոջ ողբերգական պատկերը՝ քարին նստած, խաչաձևված ոտքերով, ձեռքերով ծնոտը բռնած:

— Չեղա՛վ, չեղա՛վ, — ասում է միստր Բուլենը, կռանում մյուս աղջկա վրա, ձեռքերը դնում նրա ուսերին ու նվագում մի հատված: Հիմար աղջիկ, կարմրում է: Ինչ ծիծաղելի է:

Հիմա նրանից առաջ եկած աղջիկը գնաց, լսվում է տան առջևի դռան շրխկոցը: Վերադառնում է միստր Բուլենը ու սկսում է մտազբաղ քայլել սենյակում, սպասելով նրան: Ի՛նչ տարօրինակ բան, մատներն այնպես են դողում, որ չի կարողանում բացել դաշնամուրի վրա դրված նոտաների գիրքը: Քամին է մեղավոր. . . Միրտն այնքան արագ է զարկում, որ թվում է, թե հենց հիմա քամին վեր կբարձրացնի նրա վրա վերնաշապիկը: Միստր Բուլենը ոչինչ չի ասում, նա լուռ է: Դաշնամուրի հին, կարմիր աթոռակը բավականին երկար է. երկու հոգի հանգիստ կարող են նստել նրա վրա՝ կողքքողքի: Միստր Բուլենը նստում է աղջկա կողքին:

— Սկե՞մ գամմաներից, — ձեռքերը սեղմելով հարցնում է աղջիկը: — Ես արպեջիո էլ ունեմ:

Սակայն Բուլենը ոչինչ չի պատասխանում: Նա չի հավատում, որ միստր Բուլենը լսում է իրեն. . . ու հանկարծ երկարացնելով այն ձեռքը, որի մատին մատանի կա, բացում է Բեթհովենի նոտաների գիրքը:

Բայց ինչո՞ւ է միստր Բուլենն այդքան քաղցրությամբ խոսում, անտանելի քաղցրությամբ, կարծես երկար տարիներ ճանաչում են միմյանց ու իրար լավ գիտեն:

Բուլենը դանդաղորեն էջը շրջում է: Աղջիկը հետևում է նրա ձեռքի շարժմանը, դա շատ նուրբ ձեռք է ու միշտ թվում է, թե նրա տերը հենց նոր է լվացվել:

— Որտե՞ղ հասանք, — հարցնում է միստր Բուլենը:

Օ՛, այդպիսի ձայն, օ՛, այդ նուրբ ելևէջները: Փոքր թմբուկների մասն է. . .

— Նորի՞ց կրկնեմ:

— Այո՛, սիրելի մանկիկ:

Նրա ձայնը անչափ սիրալիր է հնչում: Քառորդ նոտաներն ու դայլայլները թռչկոտում են նոտայի գծերի վրա՝ ցանկապատի վրա խաղացող սևամորթ տղաների նման: Ինչու է Բուլենը այսպես պահում իրեն. . . Մաթիլդան լաց չի լինի, նա լաց լինելու ոչ մի պատճառ չունի. . .

— Ի՞նչ է պատահել, սիրելի մանկիկ:

Միստր Բուլենը իր ափերի մեջ է վերցնում նրա ձեռքերը: Նա կոանում է դեպի աղջիկը: Վերջինս այնքան է թեքվում դեպի Բուլենը, որ այտերը դիպչում են նրա կտավե փափուկ հագուստին:

— Կյանքը անչափ սոսկալի է, — շշնջում է աղջիկը, բայց բոլորովին չի զգում այն: Բուլենը ինչոր բան է ասում «Սպասելու», «Ժամանակը ետ շահելու» և «Այդ

բացառիկ բանի՝ կնոջ» մասին, բայց աղջիկը չի լսում նրան: Դա անչափ մխիթարիչ է. . . հավերժ. . .

Հանկարծակի բացվում է դուռը և Մերի Սվանսոնը անսպասելիորեն ներս է մտնում, սպասելով իր հերթին:

— Ալեգրոն մի փոքր ավելի արագ նվագեք, — ասում է միստր Բուլենը և վեր կենալով տեղից սկսում է ետ ու առաջ քայլել սենյակում:

— Նստիր անկյունի բազկաթոռին, փոքրիկ տիկին, — ասում է նա Մերիին:

Ա՛խ, քամին, այդ քամին: Սարսափելի է այդպիսի քամուն մենակ մնալ սեփական սենյակում: Մահճակալը, հայելին, սպիտակ սափորն ու լվացարանը փայլում են պարզ երկնքի նման: Հատկապես մահճակալն է սարսափեցնում: Նա կարծես քնած է այնտեղ խորը քնով. . . Մայրիկը պատկերացնո՞ւմ է մի վայրկյան, որ պետք է կարկատի գուլպաները, հանգուցավոր կարեր տա վերմակի վրա, որոնք նման են իժերի կծիկի: Ո՛չ, նա չի պատկերացնում: Ո՛չ, մայրիկ: Ես չեմ հասկանում, թե ինչու ես պետք է. . . Ա՛խ քամին, այդ քամին: Ծխնելույզից տարօրինակ ծխի հոտ է փչում: Որևէ մեկը պոեմ նվիրե՞լ է քամուն. . . «Թարմ ծաղիկներ եմ բերում տերևներին ու հորդառատ անձրևներին» . . . Ինչպիսի՛ հիմարություն:

— Այդ դո՞ւ ես, Բոգի:

— Մաթիլդա՛, գնանք զբոսնենք հարթավայրում: Այլևս չեմ կարող տանել այս ամենը:

— Ճիշտ որ: Ես կհագնեմ իմ ուլստրեյան վերարկուն: Սարսափելի օր է, չե՞:

Բոգիի վերարկուն էլ է իր վերարկուի նման: Աղջիկը, կռճկելով վերարկուն, նայում է հայելուն: Նրա դեմքը գունատ է, նրանք երկուսն էլ հուզված աչքեր ունեն ու կարմրած շրթունքներ: Ա՛, նրանց ծանոթ են հայելու մեջ արտացոլված այս երկու դեմքերը: Մնաք բարով սիրելիներս, մենք շուտով կվերադառնանք:

— Այսպես ավելի հարմար է, չե՞:

— Կռճկվիր, — ասում է Բոգին:

Նրանք չեն կարողանում արագ քայլել: Նրանց գլուխները հակված են, ոտքերը պարզապես կպչում են իրար: Ասֆալտապատ զիզգազ փողոցով, նրանք՝ քաղաքում շտապող մարդու նման, փութկոտ քայլում են դեպի ներքև, որտեղ աճում է հարթավայրային վայրի սամիթը: Աղջամուղջ է աստիճանաբար վրա է հասնում մթնշաղը: Քամին այնքան ուժեղ է, որ քայլելիս ստիպված են ուժ գործադրել՝

օրորվող, հարբած երկու ծերունիների նման: Հարթավայրում աճող խեղճ, փոքրիկ փահուտուկվասները խոնարհվել են գետնին:

— Արի, արի: Մոտ արի, քայլենք միասին:

Փոթորկահույզ ծովը բավականին բարձր է ծովապատնեշից: Նրանք հանում են իրենց գլխարկները, և փչող քամին խառնում է աղջկա մազերն ու ծածկում նրա դեմքը, նրա մազերից աղի համ է գալիս: Ծովը այնքան փոթորկոտ է, որ ալիքները չեն փշրվում, նրանք հարվածում են քարե կոպիտ ծովապատնեշին ու լիզում կեղտոտ, թաց աստիճանները: Ջրի մի գեղեցիկ շիթ շարտվում է ծովապատնեշից այն կողմ, դեպի սարահարթը: Նրանք ծածկված են ջրի կաթիլներով, աղջիկը բերանում ցրտի ու խոնավության համ է զգում:

Բոգիի ձայնը խզվում է: Նա խոսում է ընդհատումներով: Ծիծաղելի է. դա ստիպում է ձեզ ծիծաղել, չնայած, դա համընկնում է եղանակի հետ: Քամին տանում, հեռացնում է նրանց ձայնը փոքրիկ, նեղ ժապավենների նման:

— Արագ, ավելի արագ:

Գնալով ավելի է մթնում: Նավահանգստում քարածխով աշխատող նավերից երևում է երկու լույս, մեկը կայմի վերնից, մյուսը՝ ետնակողմից:

— Նայիր, Բոգի: Նայիր այնտեղ: Մի մեծ, սև շոգենավ, երկար օղակաձև ծուխ արձակելով, լուսավորված հրետանցքով, լույսերի մեջ թաղված, ծով է իջեցվում: Քամին արգելք չէ նրա համար. նա կարող է ճեղքել ալիքներն ու անցնել նրանց միջով, իր համար ճանապարհ բացել սրածայր լեռների արանքով, որոնք տանում են դեպի. . . Լույսերի առատությունը անչափ գեղեցիկ ու խորհրդավոր տեսք է տալիս նրան. . . Նրանք կանգնած են տախտակամածին, թևանցուկ, հենված ձողաշարերին:

. . . Ովքե՞ր են նրանք:

. . . Քույր ու եղբայր:

— Նայիր, Բոգի, քաղաքը երևում է: Փոքր է, չէ՞:

— Այնտեղ հեռվում փոստատան ժամացույցն է խփում վերջին անգամ: Այնտեղ սարահարթն է, որտեղ մենք զբոսնում էինք այն քամոտ օրը: Հիշո՞ւմ ես: Ես լաց էի լինում այդ օրը իմ երաժշտության դասին: Քանի՞ տարի անցավ այդ օրվանից: Մնաս բարով, փոքրիկ կղզի, մնաս բարով. . .

Հիմա խավարն է փռում իր թները հուզված ջրերի վրա: Նրանք այլևս չեն տեսնի այս երկուսին: Ցտեսություն, ցտեսություն: Չմոռանաք. . . Բայց հիմա նավն արդեն հեռացել է:

Ա՛խ, քամին, այդ անհիծյալ քամին: